ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/8721/02/25 ք. Երևան
26 Օգոստոսի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Նաիրա Ավետիսյանս, ծանոթանալով «ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-9/3» ծածկագրով գնման ընթացակարգի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշմամբ հրապարակված Հրավերի գնման առարկայի 7-րդ, 8-րդ, 9-րդ,10-րդ չափաբաժինների գնման առարկայի տեխնիկական բնութագրի պահանջներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում

պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարությունից պետք է պահանջել ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-9/3» ծածկագրով գնման ընթացակարգի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-9/3» ծածկագրով գնման ընթացակարգի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշմամբ հրապարակված Հրավերի գնման առարկայի 7-րդ, 8-րդ, 9-րդ,10-րդ չափաբաժինների գնման առարկայի տեխնիկական բնութագրի պահանջներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել վարույթ:
2.ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-9/3» ծածկագրով գնման ընթացակարգի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի սեպտեմբերի 30-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am